

ԱՐՄԱՎԻՐԻ Ռ.ԵՂՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ1  
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցման կոլեկտիվ եղանակի  
ազդեցությունը սովորողների ուսումնառության առաջընթացի վրա  
Հետազոտող ուսուցիչ՝ Քնարիկ Վարդանյան

Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան հ1. միջնակարգ դպրոց  
Մենթոր՝ Նարինե Վասիլյան

Արմավիր 2022

1. Ակնարկ.....	3
2. Ուսուցման կազմակերպման պատմահասարակական եղանակները.....	6
3. Ուսուցման գործընթացի կազմակերպման ընդհանուր ձևերը.....	11
4. Ուսուցման խմբային եղանակից կոլեկտիվ եղանակի անցման փուլերը.....	12
5. Կոլեկտիվ ուսումնական պարապմունքներին բնորոշ էական բնութագրիչները..	13
6. Ուսուցման կանխադրույթները.....	15
7. Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հիմնական պահերը.....	17
8. Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների մեկնարկը.....	21
9. Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների պլանավորումը.....	22
10. Առաջադրանքների փոխանակման մեթոդիկան.....	24
11. Եզրակացություն .....	25
12. Գրականության ցանկ.....	26



## Ուսուցման կոլեկտիվ եղանակի ազդեցությունը սովորողների

### ուսումնառության առաջընթացի վրա

#### **Ակնարկ**

Ուսման հաջողությունը կախված է երկու գործոններից: նրանից թե ինչպես է կազմակերպված ուսուցման գործընթացը և ինչպես է աշակերտն գործում այդ գործընթացում:

Այսօր չկա մի երկիր, որ բավարարված լինի իր կրթական համակարգի վիճակից և չկարևորի այդ համակարգի բարեփոխման հարցը:

<Ինչպես ողջ հասարակության, այնպես էլ պետության մեծ դժգոհությունը դպրոցի վիճակից ակնառու փաստ է: Անհաջողության պատճառները շատ են>:/Բիմ-Բադ/


<Կարևոր է գիտակցել, որ ներկա պայմաններում ընդհանուր կրթությունն անհրաժեշտ է հասարակության բոլոր անդամներին, բոլոր մասնագիտությունների տեր մարդկանց և ոչ միայն բուհ ընդունվող <ընտրյալներին>: Նովիկով

Այսպիսով, գործունեության հաջողությունը որոշվում է նրանով, թե որքանով է յուրաքանչյուր երեխայի համար հնարավորություն ստեղծված իրականացնել սեփական ուսումնական գործունեությունը:

Հայաստանում էլ կրթական համակարգը փլուզվեց և հայտնվեց անելանելի վիճակում: Այս վիճակը հնարավորություն տվեց ճշգրտելու, վերախմաստավորելու հանրակրթության նպատակաուղղվածությունն ու բովանդակությունը:/Մ.Մկրտչյան 1

Ուսուցչին հորդորում էին աշխատել նոր ձևերով, բայց նրա մանկավարժական մտածողությունը և մանկավարժական գործունեությունը մնում էին անփոփոխ: Իսկ կարո՞ղ է ուսուցիչը աշխատել նոր ձևերով, եթե մտածում է հին ձևով... Իհարկե՝ ոչ: Արդյունքում ստացվում է, որ նա դոփում է նույն տեղում:

Դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի վերլուծությունը ցույց տվեց, որ այն հիմնված է երկու ամենագլխավոր և

ամենակարևոր <սյունների> վրա՝ ինքնուրույնություն և կոլեկտիվիզմ (Վ. Կ. 



Դյաչենկո): Ժամանակակից ուսուցիչը հենց այս երկու <սյունների> վրա էլ պետք է վերակառուցի ուսումնական գործընթացը:

Կոլեկտիվիզմն ու ինքնուրույնությունը ` որպես մի կարևոր օղակ, կարող են իրենց հետևից քաշել դրական ու անհրաժեշտ երևույթների մի ամբողջ շղթա` հնարավորություն ստեղծելով հաջողությամբ հաղթահարելու այն բոլոր խնդիրները, որոնք ծառայած են դպրոցի և ամբողջ կրթական համակարգի առջև:

Ժամանակակից ուսումնական գործընթացի կազմակերպումը չի արտահայտում սովորողների իրական շահերը: Դպրոցականների զգալի մասը չի վստահում սեփական ուժերին, նրանց մոտ նկատվում է վախ, անհաջողության զգացում, ընկճվածություն: Ընդհանուր առմամբ, այս ամենը վկայում է դասի ժամանակ անհատի անհանգիստ հուզական վիճակի մասին: Որպես հետևանք` աշակերտների և ուսուցիչների հոգնածությունը, իր նպատակին չծառայող զգալի և անարդյունավետ ժամանակի կորուստը:

Հետազոտման խնդիր

1. Ծրագրային կատարողականության պահանջ, որը չի ապահովվում բոլոր սովորողների գիտելիքների տեսանելի աճ:

2. Ուսուցման ողջ գործընթացում որոշ աշակերտների ուսումնառության չնչին քայլերով առաջխաղացում կամ դուփում:

3. Սովորողի գիտելիքի աղճատվածությունը կարողությունից և հմտությունից:

Հետազոտման նպատակ /ակնկալիք/

Մեթոդի կիրառումը կնպաստի սովորողի`



Ուսումնական գործընթացում ներգրավվածության առավել բարձր մակարդակին

.Գիտելիքի ինքնուրույն ձեռքբերելուն

.Մոտիվացիային և ինքնագործունեությանը

.Սովորածը սովորեցնելու կարողունակության զարգացմանը

Ի՞նչ անել.որպեսզի կազմակերպել սովորողների ուսումնական գործընթացը, որ նրանք կարողանան աշխատել և՛ միասին, և՛ առանձին: Բայց ամբողջ դժվարությունն այն է, որ ինչպես դասերի ժամանակ, առավել ևս տնային աշխատանքների կատարման ժամանակ, ո՛չ միասին աշխատանքը, ո՛չ էլ առանձին աշխատանքը որակյալ և արդյունավետ չի լինում:

Ինչպե՞ս հեշտացնել աշխատանքս՝ միաժամանակ դարձնելով այն ավելի արդյունավետ: Այսինքն, որ սովորողները ավելի քիչ ուժ ու ժամանակ ծախսեն, բայց ավելի շատ բան իմանան և կարողանան...

Աշակերտը նյութը յուրացնում է ավելի արագ և որակով այն ժամանակ, երբ ստացած գիտելիքը կիրառում է գործնականում կամ հաղորդում է ուրիշին. իմացար ինչ-որ բան՝ անմիջապես պատմիր, բացատրիր ուրիշին, կիրառիր գործնականում, եթե անհրաժեշտ է, ո՛չ մեկ անգամ: Սովորողը պետք է ստացած գիտելիքը գործնականում կիրառի և մյուսներին բացատրի այնքան ժամանակ, քանի դեռ նոր գիտելիքներին ու հմտություններին կատարյալ չի տիրապետում:



## Ուսուցման կազմակերպման պատմահասարակական

### եղանակները

Դպրոցի զարգացման պատմությունը գիտի ուսուցման կազմակերպման միայն երկու պատմահասարակական եղանակ՝ ուսուցման անհատական եղանակ (ՈւԱԵ), որը գոյատևեց մինչև XVI դարը, և ուսուցման խմբային եղանակ (ՈւԽԵ), որը սկիզբ առավ XVI-XVII դարերից, և շարունակում է գերակայել մեր օրերում:

ՈւԱԵ ժամանակ ուսուցիչը աշակերտներից յուրաքանչյուրի հետ աշխատում էր անհատապես և հերթականորեն: Եթե նա սովորեցնում էր մեկ կամ նույնիսկ մի քանի աշակերտի, ապա հասցնում էր բացատրել նոր նյութը, տալ այդ նյութը ինքնուրույն մշակման, հետո ստուգել և, բնականաբար, անցնել հաջորդ նյութին միայն այն

ժամանակ, երբ համոզված էր, որ նախորդ նյութը յուրացվել է հիմնավորապես: Այս դեպքում ուսուցիչը կարողանում էր յուրացվող նյութը բացատրել այնքան անգամ, որքան անհրաժեշտ էր, որ աշակերտը ճիշտ հասկանա և յուրացնի այն: Նման ուսուցման ժամանակ ուսուցիչը կարող էր և չգրել աշխատանքային պլան, բայց այնպես գործել, որ յուրաքանչյուր նոր նյութ աշակերտի կողմից յուրացվի ճիշտ և հիմնովին: Ուսուցիչն աշխատում էր քիչ թվով աշակերտների հետ և բավական ժամանակ ուներ աշխատելու նրանցից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին: Ուսուցման ձևը շատ պարզ ու հասարակ էր: Նման պարզ ձևը գոյատևեց այնքան ժամանակ, քանի դեռ հասարակությունը շատ թվով գրագետ մարդկանց կարիք չուներ: Այդ պահանջարկի հասունացման հետ յուրաքանչյուր ուսուցչի մոտ աշակերտների քանակը ավելացավ: Ավելացան նաև դժվարությունները. Ուսուցիչը գնալով ավելի քիչ ժամանակ էր կարողանում տրամադրել աշակերտներից յուրաքանչյուրին: 20-25 աշակերտ ունենալու դեպքումա նա ամեն մի թեմա պետք է բացատրեր յուրաքանչյուր աշակերտի, հետո էլ յուրաքանչյուրին ստուգեր: Ուսուցիչները արդեն չէին կարողանում հաղթահարել այդ



նախապատասխանում ստացված արդյունքներին: Գիտելիքների մակարդակը գնալով ընկնում էր: Սկսվում է ուսուցման այդ եղանակի ճգնաժամը: Եվ այդ ընթացքում է սկսվում մշակվել ուսուցման խմբային եղանակը՝ ՈւԽԵ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ բոլորիս լավ հայտնի դաս-դասարանային (և լեկցիոն-սեմինարային) համակարգը:

ՈւԽԵ ժամանակ ուսուցիչը աշխատանքը պլանավորում է դասարանի համար, այլ ոչ դասարանի յուրաքանչյուր աշակերտի համար: Նման պլանավորման ժամանակ դասարանը, որպես մեկ ամբողջություն, կարող է առաջ ընթանալ, իսկ առանձին աշակերտներ կարող են ետ մնալ: Ուսուցիչը կարող է դասարանին հարց ուղղել և աշակերտներին առաջարկել հերթով պատասխանել, կարող է հենակետային ազդանշաններ օգտագործել, կինոնկարներ ցուցադրել, թելադրություն տալ, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ անցկացնել, մրցույթներ, խաղեր կազմակերպել և այլն: Թվարկված և չթվարկված միջոցներն ու ձևերը հնարավորություն չեն տալիս ասելու, որ յուրաքանչյուր աշակերտ տիրապետում է ուսումնասիրվող նյութին: Այն, ինչ կարող էր անել ուսուցիչը անհատական ուսուցման ժամանակ, չի կարողանում անել խմբային ուսուցման դեպքում:

Իսկ ի՞նչ չէմ կարող անել ես՝ որպես ուսուցիչ՝

1. Չեմ կարող իմանալ, թե նոր նյութից հանձնարարված առաջադրանքները տանը լուծելիս աշակերտը ինչ դժվարությունների է հանդիպում:
2. Չեմ կարող յուրաքանչյուր հաջորդ դասին ստուգել յուրաքանչյուր աշակերտի կողմից նոր նյութի յուրացման մակարդակը:
3. Չեմ կարող վերացնել բացահայտված սխալները:
4. Չեմ կարող պատրաստել ինքնակրթության յուրաքանչյուր աշակերտի:



Այսինքն, հետադարձ կապ չկա, և ես ամբողջական տեղեկություն չունեմ յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների և կարողությունների մասին: Շատ եմ աշխատել հետադարձ կապի բարելավման ուղղությամբ, բայց էական փոփոխություններ այդպես էլ չեմ արձանագրել: Եթե հետադարձ կապն էլ ապահովում եմ, միևնույն է, չեմ կարող աշխատել յուրաքանչյուր աշակերտի հետ՝ նրա բացթողումները վերացնելու համար:

Օբյեկտիվ հնարավորություններս խմբային ուսուցման ժամանակ սահմանափակ են: Եվ ինչքան մեծ դեր եմ տալիս կրթությանը և ինտելեկտուալ զարգացմանը, այնքան այս սահմանափակումները էական դեր են ունենում: Սահմանափակումները դրսևորվում են ՈւՆԵ առանձնահատկություններում, իսկ առանձնահատկություններն էլ պայմանավորված են ընդհանուր ճակատի առկայությամբ (<ընդհանուր ճակատ> տերմինը ներմուծել է Մանուկ Մկրտչյանը):

Ընդհանուր ճակատն այն իրավիճակն է, երբ ուսումնական խմբի (դասարանի) բոլոր անդամները սովյալ պահին զբաղված են միևնույն հարցով, ուսումնասիրում են միևնույն թեման՝ միևնույն ձևերով ու միջոցներով, միևնույն ժամանակահատվածում:

Շենց ընդհանուր ճակատի առկայությամբ են պայմանավորված խմբային ուսումնական պարապմունքների և դրանցից բխող ուսուցման կազմակերպման խմբային եղանակի հետևյալ առանձնահատկությունները. /Մ.Մկրտչյան 2/

1. դասը ուսումնական պարապմունքների կազմակերպման հիմնական միավորն է,
2. դասարանները ուսումնական խմբի հատուկ տեսակ են, որտեղ ընդգրկվում են միայն այն սովորողները, որոնք ուսումնասիրում են ընդհանուր ծրագրի միևնույն մասը,
3. ընդհանուր ծրագիրը ուսումնական խմբի բոլոր անդամները ուսումնասիրում են թեմաների և բաժինների միևնույն հաջորդականությամբ,
4. տեղեկատվության սկզբնական աղբյուրը ուսուցիչն է,





5. հաղորդակցման լեզուն մեկն է,

6. սովորողները և սովորեցնողները խիստ առանձնացված են:

Նշված առանձնահատկությունները բնորոշ են ուսուցման խմբային եղանակին, և դրանց պատճառով էլ այն անգոր է լուծելու հասարակության զարգացման ներկա մակարդակին համապատասխանող ուսումնադաստիարակչական խնդիրները:

Մեր ժամանակներում <Հանրակրթության խնդիրն այն է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ունենա հասարակության պահանջմունքներից առանձնացված և սահմանված կրթվածության որոշ մակարդակ:

Հետևաբար, հանրակրթության գործընթացի արդյունքը պետք է չափվի ոչ միայն ուսումնական խմբի ընդհանուր իրավիճակով, այլ ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի ձեռքբերումներով:

Անհատի վրա կրթական գործընթացի արդյունավետ ներգործության անհրաժեշտ պայմանը այդ գործընթացի մեջ անհատի պարտադիր գործուն ընդգրկվածությունն է:

Ներկայիս կրթական պրակտիկայի ելակետային հիմնահարցը դա ուսումնական գործընթացի մեջ ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն ընդգրկվածության հիմնահարցն է:

Այս հիմնահարցը լուծելու համար պետք է հասնել նրան, որ

- մանկաարժական աշխարհայացքն իր պատկերացումներում այն ընդունի որպես ելակետային,
- այն արտացոլվի մանկավարժական մտահաղորդակցական իրադրություններում և միջոցներում,
- կրթական գործընթացները կազմակերպվեն այնպես, որ յուրաքանչյուր երեխա ընդգրկվի ուսումնական գործընթացի մեջ և շարունակի այն «կետից», որտեղ որ հացել է:

Ես նշված հիմնահարցը անվանում եմ ելակետային, որովհետև հանրակրթության մյուս դժվարությունները ու հիմնահարցերը դրա ուղղակի հետևանքն են:

Նկատենք, որ ուսումնադաստիարակչական գործընթացին ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն մասնակցության ապահովման հարցը չի հանգում միայն իմ վարպետությամբ կամ աշակերտի կամային հատկանիշների և բարի մտադրությունների խնդրին: Այն պայմանավորված է այդ **գործընթացի բնույթով**, և ուսուցման խմբային եղանակի շրջանակում այդ հարցն **անլուծելի է**:/Մ.Մկրտչյան 3/



Նման իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է ստեղծել մի այնպիսի ուսումնադաստիարակչական գործընթաց, որը հնարավորություն կտա իմ գործառույթների մեծ մասը փոխանցել կոլեկտիվին: Այս նոր գործընթացը ոչ միայն պետք է հենվի ուսումնական խմբի անդամների համագործակցության վրա, այլ նաև պետք է յուրաքանչյուրին սովորեցնի պարբերաբար ինքնուրույն յուրացնել նոր նյութը և միայն խիստ անհրաժեշտության դեպքում դիմել ինձ կամ ընկերոջը: Այս նոր գործընթացը մասնագետներն անվանում են ուսուցման կոլեկտիվ եղանակ՝ ՈւԿԵ:

Ուսուցման խմբային եղանակից անցումը ուսուցման կոլեկտիվ եղանակին շատ բարդ գործընթաց է: Այդ գործընթացը Հայաստանի Հանրապետությունում սկսվել է 1997 թվականից «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիայի (նախագահ՝ Ալբերտ Անանյան) գիտական ղեկավար Մանուկ Մկրտչյանի և ասոցիացիայի հիմնադիր անդամների նախաձեռնությամբ:

Արդեն նշեցի, որ խմբային պարապմունքների ժամանակ ուսումնական գործառույթների մեծ մասը կատարում են ես, իսկ աշակերտների մեծ մասը գտնվում է պասիվ լսողի դերում: Իրավիճակը հաղթահարելու կրթական համակարգ ներմուծվեցին ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդները, որոնց հիմնական գաղափարը աշակերտների միջև ակտիվ փոխազդեցություն ապահովելն է: Բայց խմբային ուսուցման սահմանափակումները սահմանափակում են նաև աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները: Հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման համար: Խմբային ուսումնական պարապմունքներում այս փոքր «մեջբերումներն» էլ արդեն հանդիսանում են այլ տեսակի ուսումնական գործընթացի նախադրյալները է: Ինտերակտիվ մեթոդների կիրառումը այն քայլերից մեկն է, որը հնարավորություն կտա իրագործել աստիճանական անցումը ուսուցման կազմակերպման խմբային եղանակից ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակին:



## Ուսուցման գործընթացի կազմակերպման ընդհանուր ձևերը

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների մասին խոսելուց առաջ պետք է իմանալ, թե ինչ տերմիններ են օգտագործվելու, ինչ իմաստ է դրանց տրվելու:

Ըստ Վ. Կ. Դյաչենկոյի՝ ուսուցումը մարդկանց միջև հատուկ կազմակերպված հաղորդակցություն է (ձայնանշանային փոխազդեցություն), որի ընթացքում վերարտադրվում ու յուրացվում է պատմահասարակական փորձը՝ մարդկային գործունեության բոլոր տեսակները: «Ուսուցումը ձայնանշանային փոխազդեցություն է գիտելիք ու փորձ ունեցողների և դրանք ձեռք բերողների միջև»:

Վ. Կ. Դյաչենկոն ներմուծել է նաև «ուսուցման գործընթացի կազմակերպման ընդհանուր ձևեր» հասկացությունը:

Ուսուցման գործընթացի կազմակերպման ընդհանուր ձևերը որոշվում են սովորողների և սովորեցնողների միջև հաղորդակցման կառուցվածքից: Այդպիսի ձևերը չորսն են.

- 1.անհատական,
2. գույգային,
- 3.խմբային
4. կոլեկտիվ:

Ինչի՞ց են կախված այդ ձևերը: Ինչպե՞ս ենք մենք հասկանում «հաղորդակցում սովորողների և սովորեցնողների միջև» արտահայտությունը:

Սովորեցնողը – որոշակի գիտելիք և փորձ ունեցող անձն է, իսկ սովորողը դա չունի: Այսինքն, ուսուցումը հաղորդակցումն է նրանց միջև, ով ունի գիտելիք և փորձ և նրանց, ովքեր դրանք ձեռք են բերում:



Ուսումնական խմբի բոլոր անդամների համար դասի թեման մնում է նույնը, սակայն դասի ընթացքում տարբեր աշակերտներ կարող են զբաղված լինել տարբեր հարցերով:  
Դասապրոցեսը կազմակերպելիս օգտագործվում են աշակերտների համագործակցության տարբեր տեսակի հնարքներ: Դասը որպես միավոր մնում է, բայց դասի ընթացքն արդեն տարբերվում է խմբային ուսումնական պարապմունքներին բնորոշ պրոցեսներից:



Դասարանում մեկ առարկա ուսումնասիրվում է կոլեկտիվ ուսումնական պարապմունքների միջոցով, իսկ մյուս առարկաները դեռ ուսումնասիրվում են խմբային պարապմունքներով:



Որևէ դասարանում բոլոր ուսումնական առարկաների ուսումնասիրությունը կազմակերպվում է կոլեկտիվ ուսումնական պարապմունքների միջոցով:  
Այս փուլին համապատասխան կոլեկտիվ ուսումնական պարապմունքներին բնորոշ է ընդհանուր ճակատի բացակայությունը



**Կոլեկտիվ ուսումնական պարապմունքներին բնորոշ էական բնութագրիչները.**

1. ընդհանուր ճակատի բացակայություն, այսինքն սովորողները իրացնում են տարբեր նպատակներ, սովորում են ուսումնական նյութի տարբեր հատվածները տարբեր միջոցներով, տարբեր ժամանակներում:
2. տարբեր սովորողներ ուսումնական նույն ծրագիրը յուրացնում են տարբեր երթուղիներով:
3. հարափոփոխ խմբերի առկայությունը /ոչ հաստատուն կազմով փոքր խմբեր

**Խմբային ուսումնական պարապմունքներին և կոլեկտիվ ուսումնական պարապմունքներին բնորոշ առանձնահատկությունները**

Խմբային ուսուցում	Կոլեկտիվ ուսուցում
<b>Ուսումնական խումբ</b>	
<p>Կազմավորվում է միատարիք ու միամակարդակ անդամներից: Միևնույն ուսումնական խմբում կարող են ընդգրկվել միայն նրանք, ովքեր ընդհանուր ուսումնական ծրագրի միևնույն հատվածն են յուրացրել և որոնց մնացել է յուրացնել ընդհանուր ծրագրի մյուս՝ էլի միևնույն հատվածը:</p>	<p>Կազմավորվում է տարատարիք ու տարամակարդակ անդամներից: Միևնույն ուսումնական խմբում կարող են ընդգրկվել ընդհանուր ծրագրի տարբեր հատվածներ յուրացրած և տարբեր հատվածներ յուրացնող անդամներ:</p>
<b>Ուսումնական պարապմունքներ</b>	
<p>Կազմակերպվում են ընդհանուր ճակատի</p>	<p>Կազմակերպվում են ընդհանուր ճակատի</p>

<p>տով: Ուսումնական խմբի բոլոր անդամները զբաղված են միևնույն գործով, յուրացնում են միևնույն թեման, աշխատում են միևնույն ձևով, այդ գործի համար նրանց բոլորին հատկացվում է միևնույն ժամանակահատվածը:</p>	<p>բացակայությամբ: Ուսումնական խմբի տարբեր անդամներ կարող են զբաղված լինել տարբեր գործերով, յուրացնել տարբեր թեմաներ, աշխատել տարբեր ձևերով: Նրանցից յուրաքանչյուրին հատկացվում է տարբեր ժամանակահատված:</p>
<p><b>Ուսուցման գործընթաց</b></p>	
<p>Ուսուցման գործընթացն ընթանում է ըստ դասերի, որոնք կազմակերպվում են ընդհանուր խմբի համար և իրարից բաժանվում են խմբի բոլոր անդամների համար նախատեսված ընդհանուր դասամիջոցով: Յուրաքանչյուր դաս նվիրվում է որևէ մի ուսումնական առարկայի որևէ մի թեմայի:</p>	<p>Ուսուցման գործընթացն ընթանում է առանց դասերի: Գործընթացը կազմակերպվում է այնպես, որ տարբեր աշակերտներ ուսումնասիրում, յուրացնում են տարբեր թեմաներ, հանգստանում են տարբեր ժամանակահատվածներում:</p>
<p><b>Ուսուցման գործընթացի մասնակիցներ</b></p>	
<p>Խիստ առանձնացված են երկու խմբեր.</p> <ul style="list-style-type: none"> <li>• աշխատանքը կազմակերպողներ և ուսուցանողներ</li> <li>• սովորողներ</li> </ul>	<p>Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ`</p> <ul style="list-style-type: none"> <li>• աշխատանքը կազմակերպող է</li> <li>• սովորեցնող է</li> <li>• սովորող է</li> </ul>
<p><b>Ուսուցման ծրագրի կառուցվածք</b></p>	
<p>Ընդհանուր ծրագիրը ներկայացվում է բաժիններով, որոնք կազմված են թեմաներից: Բաժինները, բաժինների ներսում թեմաները դասավորվում են խիստ հաջորդականությամբ, գծային կարգով, որը</p>	<p>Ընդհանուր ծրագիրը ներկայացվում է միայն ներքին տրամաբանական կապերով պայմանավորված կառուցվածքով: Դա հնարավորություն է տալիս կազմելու ընդհանուր ծրագրի յուրացման տարբեր</p>

պարտադիր է բոլորի համար: Բոլոր սովորողներն ընդհանուր ծրագիրը յուրացնում են բաժինների ու թեմաների միևնույն հաջորդականությամբ:	հաջորդականություններ: Տարբեր սովորողներ ընդհանուր ծիրագիրը կարող են յուրացնել բաժինների և թեմաների տարբեր հաջորդականությամբ:
--	--



### Ուսուցման կանխադրույթները

- Յուրաքանչյուր առողջ երեխա ի վիճակի է յուրացնել ցանկացած ուսումնական նյութ:
- Երեխաները միմյանցից տարբերվում են ոչ թե այս կամ այն նյութը յուրացնելու իրենց հնարավորություններով, այլ այդ նյութը յուրացնելու իրենց անհատական ձևերով ու միջոցներով:
- Աշակերտի հետաքրքրությունը ուսումնասիրվող նյութի նկատմամբ որոշվում է ոչ թե այդ նյութի բովանդակությամբ, այլ այդ նյութի յուրացման գործընթացում աշակերտի գործողությունների հաջողականությամբ:
- Ուսուցման կոլեկտիվ եղանակի մեթոդիկաների առանձնահատկությունները ուսուցման խմբային եղանակի մեթոդիկաների համեմատ**

ՈՒԽԵ (ուսուցման խմբային եղանակ)	ՈՒԿԵ (ուսուցման կոլեկտիվ եղանակ)
<b>Կազմակերպչական</b>	
-Հստակություն, հաջորդականություն -խոսում է մեկը - բացակայում է աշակերտների հաղորդակցումը -լռության պահպանում -մշտական աշխատավայր	-բացակայում է -խոսում են բոլորը -բոլորը հաղորդակցվում են -աշխատանքային աղմուկ -փոփոխական
<b>Դիդակտիկ</b>	

<ul style="list-style-type: none"> <li>-սովորեցնում է արհեստավարժ մանկավարժը</li> <li>-ամբողջ նյութը անմիջապես տրվում է բոլորին</li> <li>-ինքնուրույնության ցածր մակարդակ</li> <li>-համագործակցությունը բացակայում է</li> <li>-նյութի յուրացումը և գործնական կիրառումը առանձնացված են</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>-սովորեցում են նաև աշակերտները</li> <li>- տարբեր տեմպեր և նյութեր</li> <li>-լիարժեք ինքնուրույնություն</li> <li>-համագործակցությունը՝ ուսուցման հիմք</li> <li>-հնարավորինս մոտիվացված են</li> </ul>
<b>Չարգացնող</b>	
<ul style="list-style-type: none"> <li>-աշակերտը որպես օբյեկտ</li> <li>-հավասարեցում, երեխաների ունակությունների միջինայնացում</li> <li>-դասավանդման համակարգված բնույթ</li> <li>-չեն կարողանում ներկայացնել իրենց գաղափարը</li> <li>-չեն կարողանում արտահայտվել</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Աշակերտը՝ սուբյեկտ + օբյեկտ</li> <li>-անհատական կարողություններին համապատասխան</li> <li>-տարերային բնույթ</li> <li>-սովորում են էլույթ ունենալ, քննարկում են, ապացուցում են</li> <li>-մանկավարժական ունակությունների զարգացում</li> </ul>
<b>Դաստիարակչական</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Յուրաքանչյուրը աշխատում է իր համար</li> <li>-հարաբերությունները կոլեկտիվ բնույթ չեն կրում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- աշխատում է իր և մյուսների համար</li> <li>-հարաբերությունները կոլեկտիվ բնույթ են կրում</li> </ul>





## **Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հիմնական պահերը**

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ հանդիպում ենք աշակերտական տարբեր խմբերի, որոնք միմյանցից տարբերվում են մասնակիցների քանակով, աշխատանքի եղանակներով ու ձևերով, ուսումնասիրվող թեմաներով, նպատակով, խնդիրներով /կատարում են տարբեր հանձնարարություններ. սովորում են, կրկնում են, քննարկում են../: Այդ խմբերը կոչվում են **հարափոփոխ ջոկատներ**:

### **Հարափոփոխ ջոկատներ**

Հարափոփոխ ջոկատները աշակերտների ժամանակավոր կոոպերացիաներ են, որոնք ստեղծվում են կոնկրետ որևէ ուսումնական նպատակի կատարման համար: Հարափոփոխ ջոկատը կարճաժամկետ է և չունի մշտական կազմ: Ջոկատի աշխատանքը դադարում է, երբ առաջադրանքը կատարվում է ջոկատի բոլոր

անդամների կողմից: Հարափոփոխ ջոկատում կարող են ուսումնասիրվել տարբեր թեմաներ՝ տարբեր մեթոդիկաներով, տարբեր միջոցների օգնությամբ:

Կախված աշակերտների անհատական կարողություններից՝ տարբեր հարափոփոխ ջոկատներում կարող են նույն թեման յուրացնել տարբեր մեթոդիկաներով: Թեման յուրացնելով՝ աշակերտը տեղափոխվում է մյուս հարափոփոխ ջոկատ, որն արդեն գոյություն ունի կամ նոր պետք է ձևավորվի և կատարում է այլ աշխատանք:

### **Հաստատուն ջոկատներ**

Հաստատուն ջոկատի կազմը անփոփոխ է (ցանկալի է, որ լինի 10-ից ոչ շատ) և գործում է երկար ժամանակ: Հաստատուն ջոկատները ձևավորվում են մասնակիցների ցանկությամբ. բնակության վայրով, ընդհանուր հետաքրքրություններով, բարեկամական հարաբերություններով և այլն: Ջոկատում քննարկում են ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի պրոբլեմները. ինչն է ստացվում, ինչը՝ ոչ, ինչի կարիք ունի և այլն: Հաստատուն ջոկատի



«առաքելությունն» է՝ հնարավոր ամեն բան անել ջոկատի յուրաքանչյուր անդամի պրոբլեմը լուծելու համար: Եթե չկան հաստատուն ջոկատներ նշանակում է՝ չկա արդյունավետ ինքնակառավարում:

### **Կառավարման վահանակ**

Կառավարման վահանակը հատուկ առանձնացված տեղ է, որտեղ որոշումներ է կայացվում կառավարման պահերի վերաբերյալ: Այն պատասխանատվություն է կրում ուսումնական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների՝ ուսուցիչների և աշակերտների համար: Ուսումնական գործընթացում աշակերտների տեղափոխումը մեկ հարափոփոխ ջոկատից մեկ այլ հարափոփոխ ջոկատ կորդինացվում է կառավարման վահանակի միջոցով: Կառավարման վահանակը ժամանակի յուրաքանչյուր պահի ուսումնական գործընթացի յուրաքանչյուր անդամի համար ունի կոնկրետ առաջադրանք: Առաջադրանքը տալուց առաջ վահանակը նախապես պետք է իմանա.

1. Ինչ է յուրացրել աշակերտը և ինչ է պատրաստ նա անել:
2. Ինչ է նախատեսվում նրան անելու (անհատական ուսումնական ծրագիր):
3. Ինչ է անհրաժեշտ մնացած մասնակիցներին և ինչ վիճակում է գտնվում ամբողջ խումբը (ինչով են այդ պահին զբաղված ուսումնական գործընթացի մնացած մասնակիցները):

Ուսումնասիրվող առարկայի նյութերի յուրացման կազմակերպման համար կառավարման վահանակի տրամադրության տակ պետք է լինեն ուսուցիչները, դիդակտիկ նյութերի փաթեթը, տարբեր դասագրքեր, տարբեր աղյուսակներ, տեղեկատուներ, տեսանյութեր, ուսումնական ծրագրի կառուցվածքային սխեման, տվյալ նյութի յուրացման երթուղիները:

### **Երթուղիներ**

Երթուղիները ծրագրի յուրացման սկզբունքորեն հնարավոր ճանապարհներն են: Ոչ միշտ է, որ ուսումնական նյութի յուրացման գործընթացը համընկնում է



առաջարկվող երթուղու հետ: Անհրաժեշտ է պլանավորել երթուղիների ճկուն տարբերակներ: Երթուղին, առաջին հերթին, թեմաների կախվածության կառուցվածքն է: Դրանք օգնում են արագ որոշել հաջորդ յուրացվող թեման: Աշակերտներից յուրաքանչյուրի գործունեությունը որոշվում է որոշակի երթուղով:

Քննարկում և պլանավորում են ապագա աշխատանքները:

### **Ընդհանուր հավաք**

Ընդհանուր հավաքին պետք է ներկա լինեն ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցները: Այստեղ քննարկվում են ընդհանուր ռազմավարությանը վերաբերող հարցեր, որոշվում են աշխատանքի հիմնական ուղղությունները, որոշակի ժամանակահատվածի համար զարգացման ծրագրեր են ընդունում և այլն:

Ըստ գործառույթների, առանձնացվում են՝

- ուսուցիչ- հերթապահը,
- ուսուցիչ-մասնագետը,
- ուսուցիչ-մենթորը:

**Հերթապահ ուսուցիչը** կոորդինացնում է ուսուցիչների, աշակերտների, գործողությունները: Նա կարող է՝

- ուսուցչական կոոպերացիայի ցանկացած անդամի հետ, ուսումնական գործընթացի ժամանակ, քննարկել առաջնահերթ հարցեր,
- հարափոփոխ խմբերի հրամանատարներին հարցեր առաջադրել,
- որոշել ուսուցիչների աշխատանքի ծավալը,
- հարափոփոխ խմբերում, անհրաժեշտության դեպքում, կազմակերպչական կամ անդրադարձ վերլուծության աշխատանք կատարել,
- աշխատել պլանավորման և հաշվառման տարբեր աղյուսակների հետ,
- անդրադարձ վերլուծություն կատարել ուսուցչական կոոպերացիայում,
- ճշգրտել ուսուցիչների և հարափոփոխ խմբերի հաջորդ օրվա աշխատանքի պլանը և այլն:



### **Առարկայական ուսուցիչը կարող է՝**

- մեկնարկել թեմաները հարափոփոխ ջոկատում,
- բացատրել նոր նյութը աշակերտներից մեկին կամ աշակերտների խմբին,
- աշակերտների հետ ընդհանրացնել թեմաները և բաժինները,
- ընդունել ստուգարքներ,
- ստուգել տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքները,
- հետևել տետրերի վարման աշխատանքներին:

### **Ասիստենտ ուսուցիչը կարող է՝**

- մեկնարկել աշխատանքը ըստ մեթոդիկաների առարկայական ուսուցչի ղեկավարությամբ,
- հետևել զույգում աշխատանքին,
- օգնել հարափոփոխ խմբի հրամանատարին կազմակերպչական աշխատանքներում,
- հարափոփոխ խմբում կատարել անդրադարձ վերլուծություն,
- կատարել հերթապահ ուսուցչի տարբեր հանձնարարությունները:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ պետք է տարբերակել գիտելիքների առումով վերահսկումը ուսուցման գործընթացի վերահսկումից:

Եթե խմբային ուսումնական պարապմունքների ժամանակ գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակն՝ ըստ առարկայի, ապահովվում է ի հաշիվ մշտական ստուգման, ապա կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակն ապահովվում է ի հաշիվ որակյալ ուսուցման գործընթացի:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքներ իրականացնող սկսնակ ուսուցիչները գործնականում, հին սովորության համաձայն, ոչ թե շատ ժամանակ պետք է տրամադրեն գիտելիքների, կարողությունների և հմտությունների



ստուգմանը, այլ պետք է հետևեն գույգում փոխհամագործակցության որակին, խմբային և անհատական աշխատանքների մեխանիզմին և միջոցներին:

Հոգեբանորեն պետք է ազատվենք այն մտքից, որ ինչ անում է աշակերտը, մենք անպայման պետք է ստուգենք: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման բոլոր այն ձևերը, որոնք մինչ այժմ գոյություն են ունեցել, կիրառվում են նաև կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ. ստուգողական աշխատանք, ինքնուրույն աշխատանք, բանավոր հարցում, քննություն, ստուգարք, թեստեր և այլն: Բայց ստուգումը պետք է լինի հասցեագրված, անհատական, հաշվարկված յուրաքանչյուր սովորողի համար՝ նկատի ունենալով նրա յուրացրած թեմաները: Օրինակ, սովորողներից մեկը կարող է ստուգարք հանձնել, մյուսը նույն թեմայից գրել ստուգողական աշխատանք, երրորդը՝ թեստ լրացնել և այլն:

### **Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների մեկնարկը**

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ ուսուցչի օգնության կարիքը ունեն տարբեր հարափոփոխ խմբեր: Բայց լինում են պահեր, որ ուսումնական գործընթացը կարող է առանց ուսուցչի իրականացվել՝ ի հաշիվ մասնակիցների ինքնակառավարման: Մասնակիցներն իրենք կարող են ապահովել գործընթացների գործառույթները: Նրանք նախապես զիտեն, թե որոշակի ժամանակաընթացքում ինչ պետք է անեն և ինչպես: Կոլեկտիվ պարապմունքը ինքնակազմակերպվող, ինքնազարգացող մեխանիզմ է: Օրինակ, Բիվինի մեթոդիկան կիրառելիս սկզբում ուսուցիչն ինքն է կազմակերպում գործառույթները: Հետո, երբ աշակերտները արդեն հասկանում են գործառույթների մեխանիզմը, մնացած կազմակերպական աշխատանքները կարող են կազմակերպվել առանց ուսուցչի: Կազմակերպական բոլոր աշխատանքները իրականացնում է այդ հարափոփոխ խմբի հրամանատարը: Մեխանիզմը «գործի է դրվում» և ինքն է ինչ-որ ժամանակ



աշխատում: Ուսուցիչը այդ ընթացքում կարող է մեկ այլ գործառույթ կատարել, օրինակ՝ ստուգել:

1. Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների կազմակերպման ժամանակ սկզբում պետք է որոշել, թե ինչ է անհրաժեշտ մեկնարկել:

«Մեկնարկը» կարող է իրականացվել միանգամից կամ էլ փուլերով: Օրինակ.

1-ին փուլ. մեկնարկում են ինքնակառավարման մեխանիզմը, հրամանատարների խորհուրդը, հաստատուն ջոկատները և այլն:

2-րդ փուլ. հարափոփոխ խմբերում մեկնարկում է ուսումնական գործընթացը

### **Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների պլանավորումը**

**Առաջին առանձնահատկություն.** աշխատանքը պլանավորվում է յուրաքանչյուր աշակերտի համար: Այսինքն, հատկապես ինչ պետք է անի յուրաքանչյուր աշակերտ, կոնկրետ ինչ պետք է անի ուսումնական գործընթացի յուրաքանչյուր անդամ:

**Երկրորդ առանձնահատկություն.** պլանավորելով յուրաքանչյուր աշակերտի աշխատանքը՝ մենք պլանավորում ենք ուսումնական խմբի բոլոր մասնակիցների կոլեկտիվ աշխատանքը: Պլանավորելով յուրաքանչյուր երեխայի աշխատանքը՝ մենք պլանավորում ենք բոլոր խմբերի աշխատանքի հատուկ ձևը՝ ով ում հետ և երբ պետք է համագործակցի: **Յուրաքանչյուր աշակերտ միջոց է մյուսի համար:** Դա կարևոր առանձնահատկություն է:

### **Ի՞նչն է պլանավորվում**

1. Պլանավորվում է առարկայի բովանդակության յուրացումը:
2. Պլանավորվում է ուսումնական գործընթացի կազմակերպումը:

**Ի՞նչ միջոցների հաշվին կարելի է պլանավորել ուսումնական գործընթացը:**



Ուսումնական գործընթացը պլանավորվում է հաշվառման տարբեր աղյուսակների միջոցով.

- օրվա աշխատանքների պլանավորման աղյուսակ,
- շաբաթվա աշխատանքների պլանավորման աղյուսակ,
- հարափոփոխ խմբի հաշվառման աղյուսակ,
- ժամանակի հաշվառման աղյուսակ,
- ուսուցչական կոոպերացիայի զբաղվածության հաշվառման աղյուսակ,
- տնային հանձնարարությունների և այլ անհատական առաջադրանքների հաշվառման աղյուսակ:



## *Առաջադրանքների փոխանակման մեթոդիկան*

Մեթոդիկան նախատեսված է տիպային, ստանդարտ առաջադրանքների լուծման ուսուցման համար: Առաջադրանքը կազմված է երկու միանման վարժություններից, խնդիրներից կամ հարցերից: Առաջադրանքները խմբավորվում են ըստ բաժինների: Նպատակահարմար է առաջադրանքները ներկայացնել հատուկ քարտերի վրա: Սովորողները մի տիպի խնդիրների լուծումը սովորում են ուսուցչից, իսկ մյուսներինը՝ այլ սովորողների հետ փոփոխական կազմով զույգերում համատեղ աշխատելու շնորհիվ: Այս մեթոդիկան պետք է մեկնարկել. ուսուցիչը անհատական աշխատում է յուրաքանչյուր աշակերտի հետ, օգտագործելով միևնույն տիպի երկու խնդիր պարունակող առաջադրանք հատուկ քարտը: Ուսուցիչը բացատրում է խնդրի լուծման ձևը, տալիս անհրաժեշտ տեսական գիտելիքներ, առաջին խնդրի լուծումը գրում է աշակերտի տետրում: Երկրորդ խնդիրը ինքնուրույն լուծում է աշակերտը՝ մեկնաբանելով իր գործողությունները: Հետո անհրաժեշտ է կազմակերպել սովորողների համագործակցությունը: Աշակերտները զույգերում մեկը մյուսին սովորեցնում են իրենց խնդիրների տիպերի լուծումները: Հաջորդ զույգի հետ աշխատելիս՝ սովորողը պետք է սովորեցնի նաև նախորդ զույգում սովորած խնդիրների լուծումը: Այս մեթոդիկայով աշխատելու համար անհրաժեշտ է հատուկ պատրաստել դրդակտիկ նյութ: Զույգերում սովորողների հիմնական աշխատաձևը փոխուսուցումն է:





## Եզրակացություն

Հանրակրթության ոլորտում առկա են լուրջ հիմնախնդիրներ. ցածր են ուսուցման որակը և ուսուցման արդյունավետությունը՝ օբյեկտիվորեն պայմանավորված դաս – դասարանային համակարգին առանձնահատուկ սահմանափակումներով: Նոր հանրակրթական համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է իրականացնել արմատական համակարգային բարեփոխումներ , որոնք պահանջում են ուսուցման կազմակերպման ավանդական մոտեցումների վերանայում, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների և ուսուցման կազմակերպման նոր եղանակի կիրառում:

Մանկավարժագիտության ժամանակակից առաջավոր ուղղություններից մեկը համագործակցային ուսուցման գաղափարախոսությունն է: Հենց սա է դրված կոլեկտիվ ուսուցման հիմքում:

Մ.Մկրտչյանը ուսուցման կոլեկտիվ եղանակի մեթոդաբանության , տեսության և տեխնոլոգիայի ստեղծողներից է և մեթոդաբանական սխեմաների հեղինակը:

Սկսած 1966 թ. Մկրտչյանը համառ և արդյունավետ ջանքեր է գործադրում ՀՀ –ում նոր , առաջատար կրթական իրողություն կառուցելու գործում. ապացույցը՝ «Բյուրակն » կրթական համալիրի ծնունդն է , որտեղ 2004 թ. սկսած ուսումնական գործընթացն ամբողջությամբ կազմակերպվում է կոլեկտիվ ( համագործակցային) ուսուցման եղանակով : Ուսուցման կոլեկտիվ եղանակի գործնական ներդրումը կարող է բարելավել դասավանդման ավանդական ուղիները: Խնդրահարույց հարցերը աշակերտի մեջ առաջացնում են որոշակի ստեղծագործական հմտություններ, ստիպում են արտահայտել սեփական կարծիքը, ձևավորել եզրակացություն, վարկածներ առաջադրել և ստուգել դրանք ընկերների հետ երկխոսության ժամանակ: Աշակերտների «կոլեկտիվ գործունեությունը» կրկնակի արդյունք է տալիս. օգնում է լուծել ուսումնական խնդիրը և զգալիորեն զարգացնում է աշակերտների հարցեր և պատասխաններ ձևավորելու հմտությունները, օգնում է փնտրել փաստարկներ և լուծման աղբյուրներ, վարկածներ առաջադրել և ստուգել դրանք քննադատական մտքի միջոցով, հետադարձ հայացք նետել սեփական գործողությունների վրա, ինչպես նաև խթանում է գործնական հաղորդակցումը

«Բյուրակն » կրթահամալիրն ունի գիտականորեն հիմնավորված գաղափարական հենք , և այն կարելի է դիտարկել կոլեկտիվ եղանակով ուսուցման կազմակերպման ապագայի դպրոցի գործող մոդել:



## Գրականության ցանկ

1. Վ.Կ.Դյաչենկո Նորագույն մանկավարժական տեխնոլոգիայի երկու տարբերակ, «Կրթության կազմակերպումը 21-րդ դարում »
2. Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը, Երևան 2001
3. Մ.Մկրտչյան Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական տեսական ու գործնական հարցերը, Երևան 2011
4. Գուրումյան Օ.Մ. Մկրտչյան Ծ. Ա.Առաջադրանքների փոխանակման մեթոդիկայի կիրառման փորձից ,կրթության կազմակերպումը 21-րդ դարում, գիտամանկավարժական ժողովածու, առաջին թողարկում, Երևան, «Նոյյան տապան»,1998 թ.,էջ 36-45:
5. 5.Հովսեփյան Վ. Վ.Փոխվարժանքի մեթոդիկայի արդյունավետ կիրառումը տարրական դասարաններում , « Նախաշավիղ», գիտամեթոդական վերլուծական հանդես, N 1,2003թ.,էջ 14-17:
6. Մկրտչյան Մ.Ա . Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը,
7. «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա,Երևան,2001 թ.,էջ 14-15:
8. Մկրտչյան Մ.Ա . Ուսուցման կազմակերպման խմբային եղանակից կոլեկտիվ եղանակի անցման անխուսափելիությունն ու անհրաժեշտությունն,« Վասն արդարության», 43, Վանաձոր , 2003թ.,էջ 33-39:

